

ՖԻՂԻԿԱ ԵՎ ՓԻԼՄՈՒՅԵՌՈՒՅՆ

Ա. ԺՄՈՒԴՍԿԻ

Ֆիղիկա-մաթեմատիկական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր

Բնագիտությունը դա կենդանի և անկենդան բնության կառուցվածքը, հատկություններն ու վերափոխություններն ուսումնասիրող գիտությունների հանրագումարն է: Վերջին տասնամյակներում այն շատ բուռն է զարգանում:

Բնական գիտությունների ծագումն ու զարգացումը կապված է մարդկային պրակտիկ գործունեության, արտադրության կարիքների հետ: Ժամանակակից բնագիտության օբյեկտիվ տվյալները կազմում են մարդկային առաջադիմության նյութական հիմքը. նրանց կիրառումը արդյունաբերության մեջ վճռական գործոն է հանդիսանում սոցիալիստական հասարակարգում արտադրողական ուժերի հոգոր զարգացման համար: Խնայես նշանակած է ՍՄԿՊ ծրագրում, գիտության և տեխնիկայի հետազա առաջադիմության հետանկարները ներկա ժամանակաշրջանում որոշվում են, ամենից առաջ, բնագիտության առաջասար ձևողերի, այդ թվում նաև ֆիզիկայի նվաճումներով:

Բնական գիտությունների և ֆիզիսովայության միջև փոխադարձ կապի հարցը մշտապես կարենոր և ակտուալ է: Այն բանից, թե ինչ դիրքերի վրա է կանգնած բնախուզվը—մատերիալիստական թե իդեալիստական— կախված են նրա հետազոտությունների արդյունքներն ու գործնական արժեքը: Մատերիալիստական ֆիզիսովայությունը նպաստում է գիտության զարգացմանը, իդեալիստականը՝ արգեւակում:

Բնական գիտություններն ուսումնասիրում են մեզ շրջապատող օբյեկտիվ նյութական աշխարհը, նրա երևույթներն ու օրինաչափությունները՝ բնության ուժերը ճանաչելու, վերափոխելու և մարդու շահերին ծառայեցնելու նպատակով: Ի տարբերություն բոլոր նախորդ ֆիզիսովայական սիստեմների, որոնք շահում էին միայն բացատրել

աշխարհը, դիանեկտիկական մատերիալիզմը առաջ բաշեց այն հարցը, որ նյութական աշխարհի ճանաչումը մարդու կողմից իրականացվում է այն վերափոխելու նպատակով: Ամենից առաջ հենց սրանում է բնագիտության և նրա միակ ճիշտ գիտական ֆիզիսովայական հիմքի՝ դիանեկտիկական մատերիալիզմի միջն եղած կապը: Դիանեկտիկական մատերիալիզմի ֆիզիսովայությունը աճել է ժամանակակից բնագիտության նվաճումների գրանիտն հիմքի վրա: Միաժամանակ բնագիտությունը և մասնավորապես ֆիզիկան զարգանում են դիանեկտիկական մատերիալիզմի մեթոդոլոգիական սկզբունքների հիմքի վրա:

Ֆիզիկայի ու մյուս բնական գիտությունների և ֆիզիսովայության փոխադարձ կապի բովանդակությունը խորապես ըմբռնելու համար մնձ նշանակություն ունի Վ. Ի. Լենինի ասուցքն այն մասին, որ «մարդու գիտակցությունը ոչ միայն արտացոլում է օբյեկտիվ աշխարհը, այլև ստեղծագործում է այն»: Եվ խևապես, եթե նախկինում մարդու առարկայական գործունեությունը սահմանափակվում էր լոկ բնության ծնած նյութերի շրջանակում, ապա գիտության և տեխնիկայի զարգացման ներկա էտապը բնորոշվում է արտադրության մեջ այնպիսի նյութերի լայն օգտագործմամբ, որոնք ստեղծվում են մարդու կողմից և բնական նյութերի համեմատությամբ ունեն միանգամայն նոր հատկություններ՝ արտակարգ ամրություն, բարձր ջերմակայունություն և այլն:

Դիանեկտիկական մատերիալիզմը ուսումնասիրում է նույն աշխարհը, ինչ և բնական գիտությունները: Նրա հիմնական խնդիրն է սահմանել բնության շարժման և զարգացման, հասարակության և մտածողության առավել ընդհանուր

ըրեկները: Ըսդհանքացնելով բնագիտության նորագույն նվաճումները, մատերիալիստական փիլիսոփայությունը մշտապես հարստանում է նոր դրույթներով. մշակում է հասկացություններ, որոնք կիրառվում և ստուգվում են բնագիտության ցանկացած բնագավառում: Դիալեկտիկական մատերիալիզմը լայն տարածություններ է բացում բնագիտության առջև՝ ավելի խորը բափանցելու օրգանական և անօրգանական աշխարհի գաղտներների մեջ: Դրա վառ օրինակը Փիլիկայի պարգագում է, սկսած XIX դարի վերջերից:

Այժմ կապիտալիստական երկրներում բնախույզներ մեծամասնությունը խոստովանում է, որ բնագիտության և մասնավորապես Փիլիկայի համար դիալեկտիկան մտածողության միակ ձիչտ գիտական ձևն է: Տեղին կինի հիշել, որ XIX և XX դարերի սահմանազդին, երբ հայտնաբերվել էին մատերիալի նոր տեսակներ, իդեալիստներն օգտվելով այն բանից, որ Փիլիկուների մեծ մասը չգիտեր դիալեկտիկական մատերիալիզմը. պնդում էին, թե մատերիան «անհետացավ»: «Ֆիլիկական իդեալիզմը» մխտում էր Փիլիկական թեորիաների օբյեկտիվ արժեքը, փորձում էր մատերիալիզմը փոխարինել իդեալիզմով և ագնոստիցիզմով:

Ֆիլիկայի ճգնաժամն այն ժամանակ արտահայտվեց նրանով, որ իդեալիստները մխտում էին Փիլիկական թեորիաների օբյեկտիվ արժեքն ու մատերիալի, մասնավորապես նրա նոր տեսակների կառուցվածքի մասին կոնկրետ Փիլիկական թեորիաներ ստեղծելու հնարավորությունը, սահմանափակում էին գիտության նորագույն նվաճումների պարակտիկ կիրառությունը:

Իր փիլիսոփայական աշխատավոր մատերիալիզմում Վ. Ի. Լենինը մարքսիստական դիալեկտիկական մատերիալիզմի հիման վրա ընդհանրացրեց Փիլիկայի այն ժամանակական նոր տվյալները և ուղիներ նշեց հաղթահարելու համար այն ճգնաժամը, որ ստեղծել էր իդեալիզմը Փիլիկայի առջև: Վ. Ի. Լենինը նշում է, որ չի կարելի մատերիալի այս կամ այն կառուցվածքի մասին ուսմունքը, նոր ձևերի մատերիալի հատկությունների մասին հարցը նույնացնել մատերիալի փիլիսոփայական կատեգորիաի. խացության թեորիայի հարցերի նետ: Վ. Ի. Լենինը գիտականորներ հիմնավորեց այն գաղափարները, որոնք Փիլիկան հանեցին ճգնաժամից, նպաստեցին միկրոաշխարհի երեւույթների Փիլիկական հնտապոտությունների ընդամենը:

Մեր ժամանակներում արդարացավ Վ. Ի. Լենինի այն անխախտ հավատը, որ բնագիտությունը կիրադրահարի ամեն մի ճգնաժամ կապված մետաֆիլիկական մատերիալիզմը

դիալեկտիկական մատերիալիզմով անպայման փոխարինելու նետ: Այդ բանում մեծագույն դերը պատկանում է Լենինի «Մատերիալիզմ և էնափիլիոկրիտիցիզմ» աշխատությանը, որն այժմ էլ օժանդակում է Ֆիլիկայի բազմակողմանի պարզացմանը:

Ֆիլիկայում և առհասարակ բնագիտության մեջ շարունակ պարզար է գնում մատերիալիզմի և իդեալիզմի միջև: Սակայն վերջին 60 տարվա ընթացքում այն առանձնապես տուր բնույթ է տատացել: Դա բացատրվում է նրանով, որ դիալեկտիկական մատերիալիզմի վրա խարսխված Փիլիկան աշխարհի միկրոկառուցվածքի, բնության երևույթների մասին իր խոր բացատրությամբ ապացուցեց իդեալիզմի ողջ հակագիտական կությունը:

Պատմական նոր պայմաններում Վ. Ի. Լենինի կողմից կարգացված, դիալեկտիկական մատերիալիզմի դրույթների հիման վրա Փիլիկայի, ինչպես և ամբողջ բնագիտության զարգացումը նշանավորվեց փիլիսոփա և վաճառությունը: Եթե XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին որոշ գիտականներ մխտում էին ատոմների և էլեկտրոնների գոյությունը, ապա մեր ժամանակներում բոլորին հայտնի է, թե որքան լայնորեն են դրանք կիրառվում պրակտիկայում: Գիտության կողմից ատոմի ներքին կառուցվածքի ճանաչումը և մի ատոմը մի այլ ատոմի վերափոխելու պայմանների ուսումնասիրումը հնարավորություն ընծեռեցին ստեղծելու ատոմային էլեկտրակայաններ, որոնցում օգտագործվում է ատոմային միջուկների վերափոխման էներգիան: Էլեկտրոնային մանրադիտակի օգնությամբ մարդը հնարավորություն ունի ոչ միայն դիտելու, այլև լուսանկարելու նյութերի կառուցվածքն ու նույնական մեծ մոլեկուլները: Ունտղենյան ճառագայթները թույլ են տալիս ուսումնասիրելու ատոմների դասավորությունը նյութի և էլեկտրոնների դասավորությունը ատոմի մեջ: Կակտուտայում, գավերում, պինդ և նեղուկ մարմիններում էլեկտրոնային և իոնային պրոցեսների մասին Փիլիկական գիտությունը՝ էլեկտրոնիկան, լայն կիրառություն է գտնել գիտության, ժողովրդական տնտեսության և առողջապահության բոլոր ճյուղերում: Մեկ միկրոնի համանոր չափերով ֆոկուսացված էլեկտրոնային ճառագայթը կարող է գոլորշու վերածել ցանկացած զդժարանակ նյութը: Այդ ճառագայթը օգտագործվում է նույնական վոլֆրամի և ալմաստի մանրաշափային մշակման համար: Լարուատոր արդյանաներում, ճիշտ է կարծ ժամանակով, բայց ձեռք է բերվել պլազմայի առավելացումն ջերմաստիճանը՝ 40 միլիոն աստիճան: Փիլիկան

դարձել է արտադրության շատ տեխնոլոգիական պրոցեսների հիմքը:

Լուսային գեներատորների շնորհիվ կարելի է ստանալ լուսափիշեր, որոնցում լուսի ճնշումը համառում է հարյուրավոր մթնոլորտի (իսկ սովորական պայմաններում լուսի ճնշումը հավասար է մեկ բառակուսի սանտիմետրի վրա տասմիջոներորդական գրամի): Գամմա-ֆոտոնը ունի 10⁻²⁸ գրամ մասսա: Ժամանակակից ֆիզիկայի միջոցներով հաստատված է, որ այն փոխներգործության մեջ է գտնվում Երկրի հետ, և երբ թուզում է դեպի Երկիրը, մեծացնում է իր կիսնետիկ Էներգիան, իսկ Երկրից հեռանալիս՝ նվազեցնում է այն: Մարդու արդեն եղել է տիեզերքում և դեպի Արեգակնային համակարգության մոլորակներն է ուղարկել ավտոմատ միջմոլորակային կայաններ:

Գիալեկտիկական մատերիալիզմ լուսադրում է ֆիզիկայի ուղին, իսկ վերջինս, իր հերթին, հայտնագործելով բնության որ Փունդամենտալ օրենքներ, նպաստում է դիալեկտիկական մատերիալիզմի դիրքերի վարդացման ու ամրապնդմանը:

Նկատի ունենալով ֆիզիկական հետազոտությունների բարդակողմանիությունը և այդ հետազոտությունների կապը փիլիսոփայական ընդհանուրացումների հետ, ֆիզիկային կարելի է տալ հետևյալ սահմանումը. ֆիզիկան գիտություն է մատերիայի պարզ, բայց առավել ընդհանուր օրինակիվ համարությունների և շարժման օրինաչափությունների մասին, որոնք առնչվում են մատերիայի կառուցվածքի, փոխներգործությունների և փոխակերպությունների հետ: Ֆիզիկան բացահայտում, ուսումնասիրում և որոշում է մատերիայի պարզագույն տեսակների կոնկրետ կառուցվածքը, նրանց շարժման և գոյության ձևերը:

Ֆիզիկական հետազոտությունների որոշակի էլեմենտները բնագիտության սեփականությունը դարձան դեռևս այն ժամանակ, երբ բնության երևույթների և օբյեկտների ուսումնասիրությունը բաժանված չէր բնագիտության առանձին ճյուղերի միջև: Այժմ ֆիզիկան դարձել է բնագիտության առաջատար գործառնություններից մեկը, այսպես ասած, նրանց պարագուիր:

Դա բացատրվում է նրանով, որ նյութական աշխարհի ֆիզիկական օրինաչափությունները դրսերլում են ողջ բնության մեջ: Բերենք մի բանի օրինակ:

Համաշխարհային ծգողականության օրենքին ներքարկվում են բոլոր նյութական օբյեկտները՝ երկրային և երկնային, անկախ այն բանից, փոքր են նրանք, թե՝ մեծ, պարզ են, թե՝ բարդ, կեն-

դանի են, թե՝ անկենդան: Նշենք, որ անկշռայնության վիճակում մարմնի գտնվելը չի նշանակում ծանրության ուժի անհետացում: Մարմնի արագացումը այդ դեպքում ծգողականության ուժի ապեցության հետևանքով հավասար է պատ անկան արագացմանը:

Հայտնի է, որ Էներգիայի պահպանման և փոխակերպման օրենքին ներարկվում են բոլոր բնական պրոցեսները անկախ այն բանից, թե ի՞նչ բնույթ ունեն՝ ֆիզիկական, բիմիկական, կենսաբանական; թե այլ: Ֆ. Էնգելի բնորշմամբ այդ օրենքը հանդիսանում է բնության բացարձակ օրենքը: Էներգիայի պահպանման և փոխակերպման օրենքը միաժամանակ Տիեզերքում շարժման միասնության գիտա-բնական ապացուցյան է: Էներգիան շարժման չափանիշն է, որը ո՞չ ստեղծվում է, ո՞չ էլ ոչնչանում, այլ մի ծից անցնում է մյուսին: Էներգիայի պահպանման և փոխակերպման օրենքը հիման վրա գիտնականները դեռևս 30-ական թվականներին կանխագուշակեցին անորսայի մասնիկի՝ նեյտրինոյի գոյությունը. իսկ այժմ դա ապացուցված է փորձնականություններին:

Նեկավարվելով մատերիայի և շարժման միասնության վերաբերյալ փիլիսոփայական դրույթով, XX դարի ֆիզիկան հայտնագործեց մասսայի և Էներգիայի միջև անքակտելի կապի օրենքը: Այդ օրենքը ընկած է միջուկային էներգետիկայի հիմքում: Դա վկայում է այն մասին, որ շարժման պատճառը գտնվում է հենց մատերիայի մեջ: Մատերիան իր վարդացման համար ոչ մի շարժափուլ չի պահանջում. բնության մեջ հավերժական փոփոխությունները կատարվում են մատերիայի ինքնաշարժման և ինքնապարզացման հետևանքով: Միաժամանակ մասսայի և Էներգիայի միջև փոխադարձ կապի օրենքը հանդիսանում է մատերիայի և շարժման միջև անքակտելի կապի վերաբերյալ փիլիսոփայական դրույթի գիտական կոնկրետացումը:

Անցյալի գիրին է անցել առաջնային անբանելի և անփոփոխ մասնիկների՝ տիեզերքի աղյուսիկների գոյության մասին միտքը: Ֆիզիկայի կողմից ուսումնասիրվող արոցեսների բնույթը չի համապատասխանում մետաֆիզիկական մատերիալիզմի բարացած կատարելության և դրույթներին, այլ ընդհակառակն, բացում է մատերիայի տարրեր ձևերի փոխակերպությունների և փոխադարձ փոխակերպությունների հարատև փոփոխելությունը: Ֆիզիկան ոչ միայն հետապոտել է միկրոաշխարհի երևույթները և գործնականություն-օգտագործում է դրանք, այլև օրգանական կապ է սահմանել մակրոաշխարհի և միկրոաշխարհի միջև, թեև վերջինս առաջինի պատճենը չէ: Ֆի-

վիկայի և ամբողջ բնագիտության զարգացման ողջ ընթացքը, որը համապատասխանում է դիալեկտիկական օրինաչափություններին, հարվածներ է հասցնում մետաֆիլիկային և իդեալիզմին, նըրաց ապդեցությունից կտրելով այն բնախուզվեներին, որոնք դժուս կանգնած են սիսալ, հակագիտական դիրքերի վրա:

Ժամանակակից գիտությունը պարզել է շարժվող մատերիայի գանձական ձևերի փաստական անսպառելիությունը: Դրա հետ մեկտեղ հայտնաբերված է, որ նյութական սերտ միասնություն գոյություն ունի այդ ձևերի միջև: Այդ միասնությունը հաստատված է մատերիայի գիտակերպման փաստի հիման վրա: Վերջին ժամանակներս ստացել են նույնիսկ անդրուրանային էլեմենտներ, որոնք մինչ այդ Տիեզերքում չեն հայտնաբերվել:

Ֆիզիկան պարզել է, որ նյութը փոխակերպվում է ճառագայթման և ընդհակառակի: Բացասական և դրական էլեկտրոնները հանդիպելով դադարում են գոյություն ունենալուց որպես նյութի մասնիկներ և վեր են ածվում զամանակությունների, այսինքն ճառագայթման մասնիկների, որոնք մատերիայի որակական ձևերից են:

Բազմազան գիտակերպումներ են կատարվում էլեմենտար մասնիկների հետ, սակայն դրանք դարձելի ռեակցիաներ են: Դա նշանակում է, որ մատերիան պահպանվում է ոչ միայն քանակական, այլև որակապես:


Այսպիսով, ֆիզիկայի և մյուս բնական գիտությունների ասպարեզում կատարված հետազոտությունները, բնության ճանաչման ողջ ժամանակակից հտապն ակնառու կերպով հաստատեցին, որ մատերիան չի անհնատանում և նորից չի ստեղծվում, այլ մի վիճակից անցնում է մյուսին: Ժամանակակից բնագիտությունը մատերիայի տարրեր ձևերի բազմաթիվ գիտակերպում-

ների և փոխադարձ փոխակերպումների օրինակներով ապացուցեց աշխարհի նյութական միասնությունը և այն, որ բնության մեջ չկան անսուր տարածություններ:

Հարաբերականության ժամանակակից տեսությունը կապ է հաստատում տարածության և ժամանակի, տարածություն-ժամանակ ստրուկտուրայի և մատերիայի միջև, հարստացնում դիալեկտիկական մատերիալիզմի ուսմունքը: Խնչվեն ամեն մի գիտական տեսություն, այն շարունակում է զարգանալ: Բայց յուրաքանչյուր գիտական տեսություն, որը այս էլ այն ընդհանուր լինի, միշտ վերաբերում է աշխարհի կոնկրետ երեւություններին և օբյեկտներին: Այն ամբողջ ընդհանուրը, որ ընկած է հասարակության, մարդկային մտածողության և բնության բոլոր երեսությունների ու պրոցեսների հիմքում, մատերիալիստական փիլիսոփայության կողմից ուսումնասիրվում է կոնկրետ գիտությունների տվյալների հիման վրա: Ոչ մի գիտություն այդ տեսակեածից չի փոխարինում և չի կարող փոխարինել փիլիսոփայությանը: Եվ անհմասս են պոպիտիվիստների այն պնդումները, թե՝ «գիտությունն ինքն իրի փիլիսոփայությունն է»:

Կոմունիստական պարտիան մշտապես մեծ ուշադրություն է նվիրում ժամանակակից բնագիտության փիլիսոփայական պրոբլեմների նետազա մշակման հարցին: ՍՍԿՊ Շրագրում ընդգծվում է, որ «Գիտության բուռն զարգացման դարում էլ ավելի նրատապ է դասնում ժամանակակից բնագիտության փիլիսոփայական պրոբլեմների մշակումը՝ դիալեկտիկական մատերիալիզմի, որպես հմացության միակ գիտական մեթոդի հիման վրա»: Դրանումն է բնագիտության բոլոր ճյուղերի և մասնավորապես ֆիզիկայի զարգացման նոր հաջողությունների երաշխիքը:

ԹՈՒՂԹԸ «ԲՈՒԺՈՒՄ» ԵՆ ՎԻՏԱՄԻՆՆԵՐԸ



Պարզվում է, որ վիտամիններն օգտակար են ոչ միայն կենդանի օրգանիզմների համար, ներկայումս նրանցով բուժում են հին ձեռագրերն ու թուղթը: Այդպիսի պրոցեդուրան կանխում է թղթի քայլայումը: Թղթի բուժման այդ միջոցը հայտնագործել է իտալացի բիոբիմիկոս Մարիո Պինցուտին: Նա օգտվում է դրանից հին գրերի և ձեռագրերի վերականգնման ժամանակի: